


## ՆՇԱՆԱՌՈՐ ՎԱՆՔԵՐ

Չարեհայ անապատ. — Գտնուած է Գետաբէկից գէպի ա-  
րեւելահիւսիս, մօտ Տ վերստ հեռաւորութեամբ, Պամքար գետի



ՏՈՆԱՆՈՐ ՎԱՆՔԵՐ

ձախ ափին, մի փոքրիկ հարթութեան վրայ: Վանքից փոքր  
ինչ հիւսիս, բլրակի վրայ կանգնած է զանգակատունը, իսկ

փոքր ինչ արեւմտք՝ սեղանատունը: Վանքը գտնւած է պարագալ, սրին կից կան ալժմ քանակներէց աւելի, քաշէ, թաղակալ փոքր խցեր:

Այս վանքը հիմնել է Դաւիթ եպիսկոպոսը ժէ. զարուս: Վանքը, որ կոչուած է ս. Աստուածածին, 17,28 մետր (8 սաթէն) երկարութեան, 9,72 մ. ( $4\frac{1}{2}$  սաթէն) լայնութեան և մօտ 8,64 մ. (4 սաթէն) բարձրութեան մի հասարակ շինութիւն է, չորս քառանկիւնի սիւների վրայ հաստատուած: Ունի երկու աւանդատուն, եւթը փոքրիկ պատուհան և երկու դռան արեւմտեան կողմով, որոնցից աջակողմեանը վերաշինուած է տաշած քարերով և վերին մասով մի սեղան պատաստած: Կարծուած է, թէ երբեմն արտեղ սանդուխտներ էլ են եղել և Համբարձման տօնին բարձրացել այդտեղ են պատարագ մատուցել:

Այս դուռը բացուած է մի նոր, կարմիր, տաշած քարից շինուած գաւթի մէջ, որ 8 մ. (11 արշ.) երկարութիւն, 6,48 մ. 3 սաթ.) լայնութիւն և եկեղեցաց 0,18 մետր ( $\frac{1}{4}$  արշին) աւելի բարձրութիւն ունի: Կամարները ըղորում են երկու ամբողջ և սրանց հանդէպ երկաւան կեղծ սիւների վրայ, բաժանելով գաւիթը երկու մասի (ref), որոնցից աջը աւելի լայն է: Այս գաւթի հարաւային կողմով, մի գեղեցիկ, նշխերով եզրափակուած դուռ բացուած է նոյն երկարութեան և 2,88 մ. (4 արշին) լայնութեան մի որակի մէջ, որի առաջի մասը երկու գեղեցիկ, ութանկալ սիւների վրայ բոլորով երեք կամարներ են կազմում, որոնցից միջինին ձեղունը գմբէթաձև բարձրացած է. արտեղից, երեւի, երբեմն զանգակներ են կախուած եղել:

Գաւթի հարաւային դռան վրայ գրուած է.

Ջնորհով Այն կալի կառուցաւ ամենափրկի վեր  
նաւունս սեղի Հագոյ նամարսի եկեղեցիս սուրբ եւ  
գաւիր գովելի ի հայրապետութեան (տեղը բաց է թողնուած)  
եփնեցաւ այս ձեռամբ օռ Ներսէսի հանգեւծ հ. եղ-  
գաւր՝ ամեն ի՛ փրկութիւն հոգոց մերոց, օրհ ընթեռ-  
նով յիւրեղէ մեզ ի Քո. ամէն. ԹՎ. ՌՄԼ Գ.

Արեւմտեան դռան վրայ էլ գրուած է. Սուրբ խաչս

բարեխաւս սէր Մովսէսին Ներսէսեանց վասն փրկութեան հոգւոյ բարխօսաբին, որ բազում սիրով ետուն շինել զգաւիք սուրբ եկեղեցւոյն:

Ջանգապատունը 6, 12 ժ. (8 1/2 արշին) լայնութեան, նոյնքան երկարութեան և 2—3 ժ. (3—4 արշ.) բարձրութեան քառանկիւնի մի հասարակ շէնք է, որի վրայ բարձրանում է ութ սիւների վրայ յանկած մի գմբէթ:

Ջանգապատունը ունի միայն մի դուռ, որի կամարակալ քարի վրայ գրւած է.

Կամօքն Այ շինեցաւ զանգակասունն յանուն սրբոց հրեշտակապետացն Միքայէլի եւ Դաբիէլի. ի հայրապետութեան Պետրոսի արքայան կաթողիկոսին ի տանն Արուսեանից եւ յառաջնորդութեան սուրբ օւլիսի եւ անապատաբն Զարեհայ Սարգիս վարդապետի. ձեռնաւորեամբ եւ աղօթիւմ հ. միաբանից կասարումն եղել սր խորանիս ի փառս Այ. արդ ես Քրիստոսի ծառայ Սարգիս վարդապետ եւ աղօթաւոր եղբարս շինեցաւ զսուրբ կաթողիկէս, ի փրկութիւն հոգւոց մեռաց. եւ ամենայն հետեւողաց, որ ընթեռնում յիշեցէք զմեզ ի Քս. ԲՎ. ԹՃ եւ Ը.

Սեղանատունը 25 ժ. (11 սաժէն և 2 արշին) երկարութեան, 8,64 ժ. (4 սաժէն) լայնութեան և մօտ 6,5 ժ. (3 սաժէն) բարձրութեան կամարակալ մի շէնք է, յուսարուած նեղ և փոքր պատուհաններով: Քարէ երկշար սեղանները այժմ քանդուած են: Սեղանատան մօտ գտնւում է խճանցը:

Պարսպի զաւան կամարի վրայ գրւած է.

Եւ Մկրտիչ վարդապետ շինեցի պարիսպս, որ եղել խորշ իր. թուման. ովանէս վարդապետն տուաւ ժ. թուման. շինեցաւ իշխանութեամբ սուրա:

Այս եկեղեցւոյ փոքր ինչ հետաւ, արեւելեան կողմը զտրւում է «Հարանց մատուռ», որի վրայ կայ Հեռեհայ արձանագրութիւնը.

Ի հայրապետութեան Տեառն Պետրոսի կաթողիկոսին, եւ Քրիստոսի ծառայ Սարգիս վարդապետ

կանգնեցի գիտչս Ի լուսաւորութիւն նոցայ իմոյ, եւ ծնողաց իմոց հէր Յաւանէսին Եղիսաբէթին եւ միաբանիցս, որ աստ կան հանգուցեալ, եւ ամենայն ողորմածաց մեռաց. Քրիստոս Աստած մեր լուսաւորեցէ նոցալ եւ մարմնով աստ, եւ յաւրն դասառօտմին, եւ որ ընթեռնում յիւնցէի ի Քրիստոս զՄելիոն կազմաւդս. Այս մատրան մէջ գտնոււմ է Սարգիս փարգապետի գերեզմանը, որի մօտին Հայր Զալաբեանը Հետեւալ աւանդութիւնն է պատմում. Մի պարտիկ իւր ոխերիմ թշնամուն սպանել է և կամենալով իւր անձի վրայից քերել սպանութեան ոտիւրը, սպանուածի գին գիշերը ձգել է վանքիս դռանը: Եւ երբ պարտիկները լսել են այս սպանութեան մասին, սիսել են նեղել և տանելով վանականներին իբրեւ դատաճանների: Քայց Սարգիս փարգապետը Ատուծա շնորհիւ, դատաւորների առաջ Հարցրել է մեռելին թէ ով է եղել նրա սպանողը և սա կենդանի բարբառով ցոյց է տուել իւր սպանողին և արաքիտով սպասել միաբանութիւնը փտանցից <sup>81</sup>):

Վանքը ունի 2800 գետնատին անտառ, Հինգ Հմեռանոց, որ կապալով են տրոււմ անասուններ պահելու, մի ջրաղաց երկու քարանձի, 40 գլուխ տաւար, միքանի ձի, էշ և աւն:

Վանքը պահպանում է արժ. Աստուածատուր փարգապետը, որ քսան և Հինգ տարուց ի վեր վանահայր է այս վանքում և իւր տնիտնջ աշխատութեամբ վերջ ի վերջոյ կարողացել է լիա իլով վանքապատկան անտառը, որի Համար և Վեհափառի կողմից արժանացել է խաչի և օրհնութեան <sup>82</sup>):

Վանքի արեւելեան պատի մօտ կան երկու միմեանց կից տապանաքարեր, որոնք թաղուած են Հոգի մէջ, որանցից մինի վրայ կայ Հետեւալ տապանագիրը. Այս է հանգիստ Դաւիթ Լայիկեղոսին քոյին ՌՂԻ.

Փառիտոսի Վանն. — Գտնոււմ է Ղալաքեանդից արեւելահարաւ, Տանձուտից վերեւ, մի անտառապատ սարահարթի վրայ: Աստուգապատկանայից զ աստուգապատ սպանողութեամբ իսկ

<sup>81</sup>) Զալաբեան. Զանապարհապատկիւն, Կ. Ս. եր. 164

<sup>82</sup>) Պեղաք է նաեւ ասել, որ քսան ջջուկներ կան նրա մասին:

Արևմտեան կողմից հասում է մի փոքրիկ առուակ, որ գնում, թափւում է Տանձուտի գետի մէջ, իսկ արևելեան կողմը բարձրանում է Չոպան-գաղը: Այտեղ, ամուր պարսպի մէջ կանգնած են երկու, բաւական մեծ եկեղեցիներ և մի մատուռ, երեքն էլ դեռ ևս կանգուն: Եկեղեցիները միաշափ են, ՉՏ մետր երկարութեան և 12 մ. լայնութեան, երկուսն էլ ունին մի մի կամարակաղ գաւիթ: Մատուռը ևս ունի փոքրիկ գաւիթ և որս մօտ՝ զանգակատուն, սրբատաշ քարից շինուած: Մատուռի դռան կամարակաղ քարի վրայ, մի անարուեստ խաչի թևերի մէջ գրուած է. Ն. Խ. Գ. Մուսէս երէց: Մատուռի մէջ, աջ կողմի պատում կայ մի գաղտնի մեծ պահարան:

Պարսպի մէջ կան բաւական թուով խցեր, որ բալթովին քանդուած են. կայ նաև մի ջրափաղան: Թէ վանքերի շուրջը և թէ պարսպից դուրս կան բաւական գերեզմաններ:

Ս. Թաղմանկաց վանք.— Գտնուում է խաչակաղ գիւղից դէպի Հրաթս, Հաղիւ չորս վերստ Հեռաւորութեամբ մի գեղեցիկ սարահարթի վրայ: Վանքը խաչաձև է և զմբէթաւոր 11 մետր երկարութեան և 10 մետր լայնութեան: Ունի մի աւաղ և երկու փոքր խորան, ինչպէս և երկու խորհրդարան: Տասը լուսամուտ առատութեամբ լոյս են սփռում: Վանքին կից կայ մի գաւիթ, ուր ամփոփուած են վանահայրերի մարմինները, ինչպէս Սամուէլ եպիսկոպոս Գառեան, միւս Սամուէլ, խաչատուր վարդապետ և այլն: Կայ և մի զանգակատուն, որ 1856 թուին է կառուցուած: Վանքի վրայ կայ ՆԼԸ (989) թուականը, որ զուցէ Հիմնաբկութեան թուականը լինի, թէև առանգութիւնն ասում է, թէ վանքը Հիմնուած է V-րդ դարում, ս. Մեսրոպի ներկայութեամբ: Իսկ գաւթի վրայ կայ Հեռեեալ արձանագրութիւնը.

Եկայք պատուեցում շինեալ յանուն սրբոց քաղմանկացն մեր Սահակայ եւ Մեսրոպայ, քանզի Դսմա ծաղեաց մեզ յոյս Դ Հայաստան աշխարհի. 1029 Վրկ. ԲՎ. Գաւիթս այս կառուցաւ ի վանահայրութեան Սամուէլ եպիսկոպոսի 1600 ամի:

Վանքը ունի և մի զանգակատուն, որբառաշ քարից շինած, որի վրայ արձանադրուած է.

Ջանգակատուն Կառոյց Դանձակեցի Պողոս Ըմիրխանեանցը 1856 ամի:

Վանքը ունի պարիսպ, որի մէջ գտնուած են ութ զեղեցիկ խուց, որարտէզ և մի աղբիւր: \*)

Գաթաւ մ բարձրանում է մի թումբ, որի ստորոտում, կէս շրջանաձև շարուած են խաչքարեր, իսկ թումբի վրայ կայ մի ուրիշ մարմարոնեայ մաշարձան, որի առաջին երեսին գրուած է.

Աս ամփոփին կմախ մախնեաց հանգուցեղոց ընդ հովանեա մեհաստանի ս. քաղզմանչաց. ի թիւն 405—1800 իսկ միւս երեսին՝ Կանգնի այս մահարձան ի պատի ոսկերաց որ աս երեսեցան ՚ի վերամորզման թուին 1872—1883.

Վանքում կան երեք ձեռագիր աւետարաններ, որոնցից մինը յիշատակ է Գրիգոր Սիւնեաց իշխանի. 1312 թուին խաթարայ վանքին տուած: Միւս Հեաթիւններից նշանաւոր է՝ մի եպիսկոպոսական կերպածայ թաղ 1640 թուից, նոյնպէս և մի եպիսկոսն: Մատեններից նշանաւոր է ս. Ստեփաննոս Նախապիպի մատենքը, որ նուրիկ է վանքին Իգնատիոս եպիսկոպոսը 1558 թուին:

Վանքին պատկանում է 183 զետեատին տեղ, բաղկացած վարելահողից, խոտահարքից և փոքրիկ անտառից:

Վանքին խնամակալ էր կարգուած աթոժ Հանգուցեայ զանձակեցի Ներսէս-բէկ Յ՛ր-Ներսիսեանը, որ թէ իւր անձնական դամարներով և թէ նախարարութեամբ մեծապէս բարելաւել է վանքը. վերանորոգելով շինութիւնները:

Վանքի վանահայրն է Թէոդորոս վարդապետ Ջիրակունի. գրաբառ ընդուն Հմուտ մի անձն, որ երկար ժամանակ

\*) Աւանդութիւնն ասում է, թէ այս աղբիւրը թղթել է, երբ սուրբ Մեսրոպը իւր քարզութեան միջոցին կամենալով ժողովրդին հրաշք ցոյց տալ, իբրեւ մի Մովսէս խփել է քարին և հրամայել, որ շուր թղթի:

վանքում առաջանում էր շրջակայ գիւղերից ուսման գիւմոյ երեխաներին:

Թաղամանչաց ամապատ.— Դստնում է Մեծ Բաճանց գիւղից արեւելահարաւ. Հաղիւ 2 վերտա Հեռու մի փոքրիկ բլրակի Հարթ գաղաթի վրայ, որի երեք կողմը պատում են Ղաշխայ-քար, Ալառի-ձմակ, Նալթոքեան, Կարմիր-քար, Հին-ընապատ, Ճնճա-քար միմեանց կից լեռները, որոնց մէջ ձգւում են Խիրանուորի և Անապատի ձորերը, որոնք միանալով կազմում են Քաղարանց ձորը: Առաջի երկու ձորերից Հոտում են փտակներ և միանալով կազմում Քաղարանց գետը: Հին-ընապատ տարի և Ճնճաքարի միջև կայ մի նեղ անցք, որ, ինչպէս առում են, ձգւում է մինչև լեռան միւս լանջը և կոչւում է Նաղիբի-ձակ: Ասում են, թէ Հին անապատը եղել է այդ ծակից վերև, Հին-ընապատ տարի վրայ:

Այժմեան վանքը անտաշ քարից շինուած, 15 մետր երկ. և 9 մետր լայնութեան Հասարակ շինութիւն է, կամարակաղ և անսիւն, և ունի միայն մի աւանդատուն և մի Հասարակ գալիթ: Արեւմտեան դռան կամարակաղ քարը մի Հին գերեզմանի խաչաքար է, որի վրայ գրուած է. Սր. խաչս Ովանէ-պին. միւս կողմում Միլ խոնա Ոգիգին. Իսկ խաչի ներս ընկած մասում տարբեր տառերով ձինեց զար. եկել. քվ. Ռէթ.

Վանքից փոքր ինչ Հեռու գտնւում է մի, Համեմատաբար աւելի լաւ շինուած, գմբէթաւոր զանգակատուն, ուր կայ Հեռեւեալ արձանագրութիւնը.

Եւ Պաղպասաւրի ողդի Մանեօսի Ներսէս եւ Ստէփս օվ ինք ուրբ ամապատս ա. քուման վախմ. ստա օսիւն մեզ օտեմ դ. ժամ. եթէ ոք խափանի, պաւրական լինի առաջի ասեմին քրիստոսի. քվ. Ռէթ.

Արտեղ գտնւում է տապանը «Յէրուսնց Տարուրիւնի ողդի Դարբիւղ եպիսկոսոսին 60 աւ Վանանայր եր աւ ամապատս, 96 ամեայ եր ուր փոխեցաւ առ քրիստոս. 18<sup>3</sup>/<sub>13</sub> ՌՄ2.»

Վանքի Հիւսիսային կողմում, ուր ձգւում է ձորակը, նըկատւում է պարսպի մնացորդներ: Վանքի մօտ կայ 10 թա-

զակալ խցեր, որ բաւական լաւ են մնացել: Վանքի տեղհա-  
կանութիւն է համարում մի աղի, որի արդիւնքով կառա-  
վարում է այժմեան վանահայրը, 90 տարեկան Յովհաննէս  
արեգան, որ ինքն է հաց թխում, կերակուր եփում և մէն  
մենակ ապրում այդտեղ:

Ծաղկոցավանք. — Գտնում է Գառնակեր զիւղից հարաւ,  
ժամ կէս վերստ հեռու, ձամքոր գետի ձախ ափին, մի բարձր  
ժայռի գլխին. վանքը տնօրէն է և բաւական ընդարձակ, 9 մետր  
30 ս. երկարութեան և 6 մետր 43 ս. լայնութեան. զմբէթ  
չունի, առջևից կցած է մի նորաշէն քարէ գաւիթ: Պատերի  
մէջ կան միքանի խաչքարեր, որոնցից մինի վրայ կայ ՋԻՈ.  
(1476) թուականը, իսկ մի աբիշի վրայ՝ «Սուրբ խաչ Յէր  
Ռնանս պարոն Դարիկէլին փառաւանքի. ՌՄԱԸ»: Գաւթում  
կան միքանի գերեզմաններ, որոնց շրջակայ գիւղացիները նըզ-  
նաւորների գերեզմաններ են տնուանում:

Հրեշտակապետաց վանք. — Ընկնում է Ծաղկոցավանքից  
հարաւ, քաջք ինչ հեռու. լեռան ստորոտում: Վանքի երկա-  
րութիւնն է 10 մետր 70 ս. լայնութիւնը՝ 8 մետր: Ունի մի  
քարակիր փայտէ զմբէթով գաւիթ, ուր կան միքանի գերեզ-  
մաններ: Գաւթի հիւսիսային պատի մէջ էրկու սրբատաշ քա-  
րերի վրայ արձանագրուած է.

«Հնարհիւ Աստուծոյ յիմեցաւ տուր Միմայէ Եւ  
Դարբէկս ձեռամբ Յովնաննէս վարդապետի Եւ ման-  
սեփ Յովնաննէսի համղեռն միաբան Եղբարք  
թվ. ՌՄԿԵ»:

Գաւթի մէջ գտնուած շիրիմներից մինի վրայ.

Այս է համգիս՝ նգնակեաց Յովնաննէս վարդա-  
պետի շինող վանիս Մաղամի օրդի: Թվ. ՌՄՀԷ»:

Վանքի հարաւային կողմում գտնում են տասը խցեր  
միաբանների համար, որ այժմ կիսատեք են: Հասարակ քարի  
մի հասա պարիսպ պատում է վանքը: Կալուածքներ չունի,  
բացի մի այգուց: Վանքը պաշտպանում է մի ծերունի քահանայ:

Վանքից մի քիչ հեռու կայ մի հին հանգստոտան, որի  
մէջ կան ձգնաւարների, վարդապետների գերեզմաններ:



Վանքի արեւելեան կողմում, զետակի աջ ափի շերտում մի քարայր է գտնուում, որի մէջ երեք խաչքար կայ: Սա կոչւում է Հաւանց և աւանդաթեան տեղիւմ, այստեղ հզնել են միջանի հզնաւորներ:

Մի լիւ էլ Հեռու կայ մի գիւղատեղի, տեղակ եկեղեցի և Հանդոտարան. որ բարան է իրանաւորի անունով:

Օխքը եղցի կամ Քաւանհեռ.— Չարեքի վանքի մաս, Չամբար գետի ափին ձգւում է մինչև Զիդաստորը մի լեռնաբազուկ, որի հիւսիսահարկեայ ծալքի քերծերում փորուած են քարայրներ, որոնց առաջը, բայց տեղերը քաշուած են պատեր: Այդտեղ քերծը և մանաւանդ ալքերը պատած են խիտ անտառով, մի նեղ ուղի քերծի զաղաթից տանում է զէպի ալքերը, բայց այժմ այդ նեղ ուղին էլ խափանուած է և այս քարալքերը շատ զժուարմատելի են: Արանցից երկուսի մէջ կան վէժքարեր, Հեռեւադէս և եկեղեցի են եղած: Կիրակոս Գանձակեցու ասելով (եր. 103 և 105). Աղուանից Յովհաննէս կաթաղիկաւոր երկար տարիներ այս քարալքերումն է անցկացրել, յարձակումների երկիւղից ստիպուած:

Այս Քաւանհեռից փոքր ինչ վերև գտնուում է Աղիւսաւէն տեղակ գիւղատեղին:

Մլգնաբերդ կամ Մածնաբերդ վանք.— Սա պատկանում էր Աղաբաղանայ որդի Կիւրիկէ Թաղաւարին, որ մի առ ժամանակ էլ արդտեղ է կացել: Գտնուում է Հարցհանգիստ (Չովդատ) գիւղի մօտ, մի առանձնացած լեռան հարթ զաղաթին: Վանքը երկու կամարների վրայ հաստատուած մի շէնք է և ունի մի զանգակատուն: Գռան վերև գրուած է.

Հնադարեան ուխտասեղիս յաւնուն սուրբ Սարգսի  
որէ Մլգնաբերդ. նիմնովին նորոգեց Գանձակեցի Սա-  
ղամոն Յաւ. Նալլադարեանցն ծախիւմ իւրով ի  
յիւսասակ իւր կնոջն Բալախանումի, սրդույն Աւուսի  
եւ համայն ննջեցելոց իւրոց Ի 1891 ՌՅԽ ամի:

Վանքի շուրջը պարիսպ է եղել, ինչպէս և խցեր, որոնցից միայն երկուսն են այժմ կանգուն: Վանքը այժմ նաժ-  
կուած է բարձր ծառերով:

Կարմիր եկեղեցի կամ Հոռմաշէն.—Գտնուած է Նիւլ-  
գարի մօտ, Համբար գետի աջ ափին: Սրբատաշ քարով, խաւ-  
անէ մի շէնք է, ունի գեղեցիկ կաթուղիկէ, մի առաջ խորան  
և սրա հարաւային անկիւնում մի փոքր և մուխ խորան:  
Վանքն ունի նաև մի գաւիթ, ուր կան շատ գերեզմաններ,  
բաւական թուով խցեր միարանների համար և մի քարուկիր  
շրջապարիսպ, որ արդէն կիսաւեր են:

Քարխանայ վանք.—Հիմնուած է Միրզիկ գիւղի մօտ,  
մի լեռնահայտում. երեք կողմից պատած է բարձր լեռներով,  
առջևում տարածուած է մի խոր ձոր, որի միջով հոսում է մի  
առաւակ, որ գնում միանում է Գանձակ գետակին:

Վանքը շինուած է տարնագոյն սրբատաշ քարով, ունի  
երկու փոքր և մի առաջ խորան, վեց նեղ լուսամուտ և մի  
չուռն: Վանքի երկարութիւնն է 12 մետր և լայնութիւնը՝  
8 մետր: Բեմի ճակատին մի խաչքարի վրայ գրուած է. ԹՎ. ՌԿԵ.

Վանքը ունի և մի, հասարակ քարից շինուած գաւիթ,  
ուր կան փէ—փՇ դարից միջանի գերեզմաններ:

Վանքը ունի և շրջապարիսպ ու միջանի խուցեր, կիսա-  
ւեր գրութեամբ: Շրջապարսպի մէջ կայ Քեանդաղիրմապ մա-  
կանուանուած Սարգիս վարդապետի գերեզմանը:

Վանքը բոլորովին անխնամ է թողնուած:

Եղնասար վանք.—Գտնուած է Գետաշէնից գէղի հարաւ-  
արեւելք, հազիւ երկու վերստ հեռաւորութեամբ, մի լեռնա-  
բազկի վրայ: Վանքը, որ կառուցուած է եղիշէ առաքեալի  
անուամբ, սրբատաշ քարերից, կամարակապ է և յանկում է  
երկու սիւների վրայ: Գմբէթ չունի: Երկարութիւնն է 12,4 մ.  
լայնութիւնը՝ 10,33 մ. Գրան հարաւային սեմի վրայ կար-  
գացուած է. ԹՎ. ՌՃԼԵ. եւ Նա..ո..ա Մովսէս Էրէց: Հիւ-  
սիսային սեմի վրայ. ի հօպելիամէ Ագասարաւէ Գ քուա-  
նամաւէ մեսսսան սարիւ վեր սար (1311) եւ անարժան  
ՏԷ Ղազարս գրեցի:

Վանքի շուրջը կայ բաւական թուով խցեր, որոնցից մի-  
այն երեքն են այժմ կանգուն: Սրանք միմեանց կից են և կա-  
մարակապ: Մուտքի վրայ կայ հետեւեալ արձանագրութիւնը.

Սենեակ կերեալ նրա ազան, վերին յարկօք եւ զանազան, Սակս սէրասա՛յւ սրբազան Աղիագարիս լծաբան: ՌՃԿԱ (1712):

Վանքը ունեցել է և շրջապարիսպ: Դարիս սկզբից այս վանքը անխնամ է թողնուած և այժմ արդտեղ խոտեր են աճուում: Զեքմ ունեցողներն էլ ուխտ են գալիս այդտեղ, ռաւնարակ աղբիւրի մօտ մատաղ տնում, իրենց շտերից կապում վանքի մօտ գտնուած սուրբ Ծաւից և Հիանում այն հրաշալի տեսարանից, որ բացւում է արդտեղից դիտելի առջև:

Ամենափրկիչ վանք. — Գտնուում է Կուզգար գիւղի հարաւ-արեւմտեան կողմում, Զամքոր գետակի ձորից փոքր ինչ բնորձր: Եկեղեցին կիսաւեր է և գաւթի վրայ կայ Հետեւեալ արձանագրութիւնը.

Չնորհօքմ Քրիստոսի եւ կաման էլ ես Դաւիթ եպիսկոպոս նորոգեցի զեկեղեցիս այս յիշատակ ինձ եւ իմ ծնողաց Բաղդասարին... ԲՎ. ՌՃԻԸ:

Վանքի մէջ, բնմի առաջ կան մի քանի խաչքարեր, սրտնցից ամենամեծի վրայ գրուած է.

Ի նայրապետութեան Աղուանից սն. սն. Տրդատայ ս. կաթողիկոսի, քաղաւորութեան պարսից Զահապ-բազին եւ մեղապարս.... ողիս իմ Մարգարիտ եպիսկոպոսն... նորոգեցաւ ս. Ամենափրկիչս.

Վանքը ունի շրջապարիսպ և մի քանի խցեր, որ նոյնպէս տակեր են: Մի քիչ հեռու, փոքրիկ բլրակի վրայ կայ մի հանգրտաբան:

Խամբի վանք. — Կիրակոս զանձակեցու անկող, Քարահերձում բնակուող Աղուանից Յովհաննէս կաթողիկոսը շնորհուով ալլազգիւններից եկաւ հայոց աշխարհը Զաքարէ և Երա եղբայր իզանէ մեծ իշխանների մօտ: Եւ սրանք մեծ պատուով ընդունեցին նրան և իվանէն բնակեցրեց նրան Միափոր (Փառքոս և Քառս կամ Քաւտի զաւառների վերի մասերը) գաւառի ինամշի տնուանուած վանքում: Սա սկսեց արդտեղ մի մեծ և հրաշալի եկեղեցի շինել, բայց զեւ չէր աւարտել, երբ խափանուեց, որովհետեւ եկաւ Խորասանի սուլտան Զալալագինը

և արշաւաց վրաց թագաւորութեան վրայ<sup>2)</sup>, այնուհետեւ Հետ-  
զհետէ եկան ալլաղղիների զորքերը ու տերեւոյին Հայոց, Աղու-  
նից և վրաց աշխարհները: Արանից յետոյ դարձեալ ալստեղ  
բնակուեցան Աղուանից կաթաղիկոսները և շինեցին, աւարտե-  
ցին վանքը<sup>3)</sup>: Ահա այս պատմական վանքն է, որ զօրն-  
ւում է Մեծ Ղարա-Մուրատ աւերակի արեւելահայտալին կող-  
մում, մի հովտի մէջ: Երկարութիւնն է 15 և լայնութիւնը  
5<sup>1</sup>/<sub>2</sub> մետր: Երկու սրբատաշ քարի վրայ յնուելիս է եղել մե-  
ղունը, որ այժմ բոլորովին փլել է. Հիւսիս-արեւելեան կողմում  
բարձրանում է երկյարկ զանդակատունը, նոյնպէս սրբատաշ  
քարից շինուած: Ըրաւեղ աստիճանաւոր պատուանդանի վրայ  
գրուած է մի քարեայ խաչ, որ շատ գեղեցիկ քանդակադար-  
ձուած է և կրում է վերան Հետեւեալ թուակաճը. ԹՎ. ՌՁԸ.  
(1629):

Վանքը աւնեցել է շրջապարիսպ և միաբանների խցեր,  
բայց այժմ բոլորովին քանդուած են:

Խոնիխայ վանք. — Սա մի փոքրիկ, գեղեցիկ, զմրէթա-  
ւոր վանք է Նոր Դետարակի արեւելեան կողմում, Դետարակի  
վտակի ձախ ափին. մի հարթակի վրայ շինուած: Այժմ թէև  
կանգուն, բայց անխնամ է թողնուած:

Պանսալեռնի վանք. — Սա հիմնուած է Համանուն սարի  
զաղաթին, որ գտնուում է Հանքիքնդի մօտ: Լեռը միայնակ,  
բրդաձև բարձրանում է մինչև 3000 ասնալստի բարձրութեան  
և զաղաթին ունի մի փոքրիկ հարթ տաքանութիւն: Այնտեղ,  
աւր այժմ կանգնած է մի փոքրիկ, հասարակ քարից շինած  
զմրէթաւոր մատուռ, հնումը մի մեծ վանք է եղել, բաւակա-  
նալստի խցերով և ունեցել է միաբանութիւն: Այժմ միայն  
ս. Աստուածածնի ա նին բաւական մեծ բազմութիւն ուխտ է  
գալիս այստեղ:

Սուրբ Սարգսի վանք. — Սա մի փոքրիկ մատուռ է Հին  
Դետարակի մօտ, մի բարձր և գեղեցիկ սարահարթի վրայ:  
Դետարակի պղնձահանքի կառավարիչը ալստեղ պատշգամբ,

<sup>2)</sup> Այրաբէս Գանձակեցի. եր. 103—106.

<sup>3)</sup> Ենդ. եր. 171.

խոհանոց է շինել տուել և յոճախ գրոսանքի է գալիս:

Կիրակոս Գանձակեցու տանով, այս վանքում ապաստանել է Յոհան վարդապետ Մալրաժանեցին, եզր կաթուղիկոսից Հայաձուելով և Մալրազմեցի կոչուելով:

Ամենավերջի վանք Դիլիստանի.— Գտնում է Դիլիստան գիւղից երկու վերստ Հեռու, գէպի Հարաւ-արեւմուտք, Աղ-սու կոչւած վտակի ձախ ափի մօտ, մի անտառազատ ձորակում: Տաճարը շինուած է անտաշ քարով չորս բալբակ սրենքի վրայ և ունի 23 մետր 50 սանտիմետր երկարութիւն և 10 մետր լայնութիւն: Երկու փոքրիկ, նեղ լուսամուտներ ազատ լորս են սփռում ներսը, ուր կան մի մեծ ու երկու փոքր խորաններ և երկու խորհրդարան: Միակ, Հարաւային դուռը այժմ քանդուած է, այս պատճառով էլ տաճարը թուրքերի անասունների ապաստաբան է դարձած: Աւաղանի մօտ, որ նոյնպէս կիսով չափ քանդուած է կայ ՈՂ (1641) թուականը:

Տաճարի արեւմտեան կողմին շատ մօտ կան երկու թաղական սենեակներ, որոնցից մինի դռան տեմի վրայ գրուած է. ԹՎ ՌՃԿԻ. յիշատակ է այս օրադս եղիա վարդապետին:

Տաճարի միւս, Հիւսիս-արեւելեան կողմում գտնում են միաբանների խցերը, որ նոյնպէս անասանոց են դարձած և այժմ կիսուներ գրուեցեան մէջ են: Թէ այս խցերի և թէ տաճարի կտուրին բուսած են ծառեր:

Վանքից Հաղիւ քսան և Հինգ քաղ Հեռաւորութեան վրայ կայ մի փոքրիկ, քարուկիւր մատուռ, որ այժմ ուխտատեղի է: ԶնորՀիւ այն Հանգամանքի, որ այս մատուռը դուռ ունի, մաքուր է մնացել և թուրքերի անասունները ներս չեն մտել: Այս մատուռի մէջ մի խաչի վրայ գրուած է. «Հիւրիա ապաշխարողին»: Դռան առաջ էլ մի գերեզման կայ Հեռեւեալ տաղանազրով. «Այս է նամգիւս Հիւրեղ դասին, տղաչեցէ. թՎ. ՌԿՔ.»: Գ

Դասի բէկանց վանք.— Գտնում է Դիլիստան գիւղից ներքեւ, Ինջա գետի աջ կողմում: Սա մի Հասաբակ, փոքրիկ վանք է, այժմ կիսաւեր: Զուրչք կան միաբանների խցեր և գերեզմանատուն: